ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

05. 04. 2024 *ք. Իջևան*

Մասնակցում էր ֆակուլտետի գիտական խորհրդի 24 անդամներից 14-ը:

ՕՐԱԿԱՐԳ

1. «Դասավանդման գերազանցության մրցանակ» 2023-2024 ուստարվա մրցույթի կազմակերպման և անցկացման համար ֆակուլտետի կողմից 7 հոգուց բաղկացած առանձին մասնագիտական մրցութային հանձնաժողովի կազմի առաջադրում և հաստատում (զեկուցող՝ **Կ. Պողոսյան**):
2. 2023-24 ուստարվա՝ «Ընդհանուր մանկավարժություն» մասնագիտության «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրի մագիստրոսական թեզերի թեմաների հաստատում (զեկուցող՝ **Կ. Պողոսյան**):
3. Ֆակուլտետի՝ 2023-24 ուստարվա բակալավրի ավարտական աշխատանքների իրականացման ընթացքի և նախապաշտպանությունների կազմակերպման մասին (զեկուցող՝ **Կ. Պողոսյան**):
4. 2023-24 ուստարվա 2-րդ կիսամյակի 1-ին ընթացիկ ստուգումների և քննությունների անցկացման մասին (զեկուցող՝ **Կ. Պողոսյան**):
5. Ընթացիկ հարց.
   - Հեռակա ուսուցման «Պատմություն» կրթական ծրագրի 5-րդ կուրսում վերականգնված ուսանող Դավիթ Գարիկի Գևորգյանի ավարտական աշխատանքի թեմայի («Հայ կամավորական շարժումը առաջին աշխարհամարտի տարիներին (1914-1916 թթ.)») հաստատում (զեկուցող՝ Կ. Պողոսյան):

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 1-ին հարցի վերաբերյալ զեկուցեց Հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Կ. Պողոսյանը: Նա մասնավորապես նշեց, որ ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանի՝ 2024 թ. մարտի 23-ի թիվ 52 §1 հրամանի համաձայն՝ «Դասավանդման գերազանցության մրցանակ» 2023-2024 ուստարվա մրցույթի կազմակերպման և անցկացման համար ֆակուլտետում

անհրաժեշտ է ձևավորել յոթ հոգուց բաղկացած մասնագիտական մրցութային հանձնաժողովի կազմ: Զեկուցողը ներկայացրեց ֆակուլտետի ամբիոններից առաջարկված հետևյալ անդամների թեկնածությունները.

1. Կարինե Պողոսյան (Հայոց լեզվի և գրականության ամբիոն),
2. Ավագյան Վաչագան (Հայոց լեզվի և գրականության ամբիոն),
3. Հարությունյան Քրիստինե (Օտար լեզուների ամբիոն),
4. Մուրադյան Գայանե (Օտար լեզուների ամբիոն),
5. Հարությունյան Լիանա (Մանկավարժության և հոգեբանության ամբիոն),
6. Աղուզումցյան Ռուբեն (Մանկավարժության և հոգեբանության ամբիոն),
7. Գրիգորյան Նաթելլա (Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոն):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտներ Ք. Հարությունյանը, Վ. Ավագյանը, Մ. Զուրաբյանը, պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հավանություն տալ առաջադրված յոթ անդամների թեկնածություններին և ֆակուլտետի կողմից ներկայացված առանձին մասնագիտական մրցութային հանձնաժողովի կազմն ուղարկել տնօրենի հաստատմանը:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 2-րդ հարցի կապակցությամբ Կ. Պողոսյանը նշեց, որ 2023-2024 ուստարվա հեռակա ուսուցման «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսական կրթական ծրագրի առաջին կուրսի 19 ուսանողների համար մասնագիտական ամբիոնների կողմից առաջարկվել են ավարտական թեզերի թեմաներ, որոնք նախապես ուղարկվել են նաև ֆակուլտետի գիտական խորհրդի անդամներին՝ ծանոթանալու նպատակով: Այժմ այդ թեմաները ներկայացված են ֆակուլտետի գիտական խորհրդի հաստատմանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտներ Ք. Հարությունյանը, Վ. Ավագյանը, Մ. Զուրաբյանը, հ.գ.դ., պրոֆեսոր Ռ. Աղուզումցյանը, պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը, փոխդեկան, «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսական կրթական ծրագրի համակարգող Վահագն Չոբանյանը: Ֆակուլտետի գիտխորհրդի անդամները

հավանություն տվեցին առաջարկված թեմաներին:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել հեռակա ուսուցման «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսական կրթական ծրագրի ավարտական թեզերի թեմաները և ներկայացնել Ուսումնամեթոդական վարչություն:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ զեկուցող Կ. Պողոսյանը նշեց, որ ֆակուլտետում 7 կրթական ծրագրերի գծով ավարտական աշխատանքների պաշտպանությունները կիրականացվեն ս.թ. մայիսի 2-30-ն ընկած ժամանակահատվածում:

Ըստ կարգի՝ ավարտական աշխատանքների պաշտպանություններից առնվազն 2 շաբաթ առաջ պիտի իրականացվեն նախապաշտպանությունները: Արդեն հաստատվել են առկա ուսուցման բակալավրի 4-րդ կուրսերի ժամանակացույցները, որոնց համաձայն՝ ֆակուլտետում նախապաշտպանությունները կիրականացվեն ս.թ. ապրիլի 26-ին և 27-ին: Ամբիոնների վարիչները և կրթական ծրագրերի ղեկավարները նշեցին, որ ավարտական աշխատանքներն իրականացվում են, բոլոր ուսանողները համագործակցում են ղեկավարների հետ:

Պաշտպանությունների իրականացման համար ամբիոնների առաջարկների հիման վրա ձևավորվել են ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմերը, որոնք ներկայացվել են տնօրենի հաստատմանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը, բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Ավագյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ավարտական աշխատանքների նախապաշտպանությունների և պաշտպանությունների մասին Կ. Պողոսյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 4-րդ հարցի մասին Կ. Պողոսյանը նշեց, որ 2023-2024 ուստարվա II կիսամյակի առկա ուսուցման 1-ին ընթացիկ ստուգումները և քննությունները, ըստ ժամանակացույցների, նախատեսված էր իրականացնել ս.թ. ապրիլի 3-10-ն ընկած

ժամանակահատվածում:

Դրանք ընթացքի մեջ են, իրականացվում են սահմանված կարգով, այս պահի դրությամբ խախտումներ և բողոքարկումներ չեն եղել:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, հ.գ.դ., պրոֆեսոր Ռ. Աղուզումցյանը, պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը, բ.գ.թ., դոցենտ Ա. Ավագյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2023-2024 ուստարվա II կիսամյակի 1-ին ընթացիկ ստուգումների և քննությունների անցկացման մասին Կ. Պողոսյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 5-րդ՝ ընթացիկ հարցի մասին զեկուցող Կ. Պողոսյանը նշեց, որ 2023-2024 ուստարվա երկրորդ կիսամյակում հեռակա ուսուցման «Պատմություն» կրթական ծրագրի 5-րդ կուրսում վերականգնվել է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի նախկին ուսանող Դավիթ Գարիկի Գևորգյանը: Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի կողմից Դավիթ Գևորգյանին տրվել է ավարտական աշխատանքի հետևյալ թեման՝ «Հայ կամավորական շարժումը առաջին աշխարհամարտի տարիներին (1914-1916 թթ.)»: Այն, ըստ կարգի, անհրաժեշտ է հաստատել ֆակուլտետի գիտական խորհրդի նիստում:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել հեռակա ուսուցման «Պատմություն» կրթական ծրագրի 5-րդ կուրսում վերականգնված ուսանող Դավիթ Գարիկի Գևորգյանի ավարտական աշխատանքի թեման («Հայ կամավորական շարժումը առաջին աշխարհամարտի տարիներին (1914-1916 թթ.)»):

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Կ. Պողոսյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. Վանյան